



# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Բ. — ՇՐՋԱՆ ԻԳ. 1891 ՏԱՐԻ ԻԳ. ՓԵՏՐՈՒԱՐ

## ԿՐՕՆԱԿԱՆ

### ՔԱՆԻՔԱՐՆԵՐԻ ԱՌԱՅԸ\*

II.

Չագաւ վարդապետի որ առ զհինգն՝ գործեաց նորօք եւ շահեցաւ այլ եւս հինգ, նմանսէս եւ որ դերկուան, շահեցաւ այլ եւս երկուս, եւ որ զմին առ՝ գնաց փորեաց զերկիր, եւ թագոյց դարձաթ Տեառն իւրոյ (Մատ. ԻԵ. 16-18.)

Տէրը ճանապարհ ընկաւ ի տար աշխարհ, և ծառաները գնացին

(\*) ՏԵՍ 1890 Թ. Արարատի յուլիս ամսատետրում:



աշխատելու:—Այսօր մենք կաշխատենք քննելու նոցա տուած օրինակը: Բայց այս առարկայի վերայ խօսելից առաջ ես ձեր ուշադրութիւնը կգարձնեմ Յիսուսի Քրիստոսի աշխատանքի և ձեռագործութեան մասին յայտնած հաւանութեան վերայ. ես սիրում եմ ընտրել այսպիսի իրողութիւնք, որովհետեւ նոքա ջրում են Աւետարանի վերայ գործուող միակողմանի յարձակումներն, որոնք շատ արձագանգ են գտնում մեր դարում — դար, որ ապրում է զարմանալի հակասութեանց մէջ՝ աստուածացուցանելով աշխատանքն իւր աշխարհահանդէսներում և կաթոլիկ եկեղեցականաց միջնորդութեամբ էլ սրբագործելով Ս. Լաւրոսի աղքատութիւնը: Դուք գիտէք, թէ որպիսի ճարպիկութեամբ քրիստոնէական կրօնի թշնամիք նախապատուութիւն են տալիս երբեմն մէկ և երբեմն միւս կողմին, որպէս զի խախտեն հաւատն դէպի նա: Այսպէս Յիսուսի Աւետարանում կայ գեղեցիկ խրատ, թէ որպէս մենք պէտք է հաւատանք աստուածային նախախնամութեան, օրինակ առնելով հովտի շուշանից և երկնային թռչուններից, որոնց Տէրը հագցնում է և կերակրում: Այս վարդապետութեան մասին այժմ ասում են, որ նա մի վսեմ բանաստեղծական պատկեր է և մի և նոյն ժամանակ խեղճ երագ, որ յիշեցնում է հանգստակրօնների ապարդիւն վարդապետութիւնը, սպասելով երկնից արքայութեան: Իսկ այստեղ քանքարների առակում պարզապէս կարելի է տեսնել աշխատանքի և խնայողութեան հաւանութիւնն, որոնք ներկայ քաղաքակրթութեան երկու լծակներն են, այն երկու յատկութեանց հաւանութիւնն, որոնց մասին Ֆրանկլինն ասաց. «Եթէ մի մարդ ձեզ ասի, թէ կարելի է հարստանալ ուրիշ միջոցով, քան թէ աշխատանքով և խնայողութեամբ, մի լսէք նրան՝ այդպիսին — գայթակղիչ է »: Ի՞նչ եզրակացութիւն կարելի է, մինչև անգամ, պէտք է անել սրանից: Այն եզրակացութիւնն, որ Աւետարանը բնաւ չէ պատկանում այն սահմանափակ աղանդաւորական վարդապետութեանց, որոնք աչքի առաջ ունին մարդկային կեանքի միայն մի կողմը, այլ ընդհակառակն նա՛ Աւետարանը ուշադրութեան առնում է մարդկային կեանքն իւր ամբողջութեամբ, համապատասխանում է մեր բնութեան բոլոր ձգտումներին: Քրիստոսի վարդապետութիւնը օրհ-



նում է աշխատանքն ու գերդաստանը, սրբազործելով նրան Հին ուխտի առաջին օրէնքով՝ աճեցէք և բազմացէք և լցէք երկիրն ու տիրեցէք սրան (Մննդ. Ա. 28)։ Բայց միւսնոյն ժամանակ նա ասում է մարդուն՝ դու երկնքի որդի ես, ուրեմն մտածիր և քո յաւիտեանական վիճակիդ վերայ, նուիրիր քո հոգսերդ երկրին, որ տիրես սրան. բայց ուղղիր հայեացքդ դէպի երկինք, որ քո ամենամեծ հայրենիքդ է. վեցօրեայ եռանդոտ գործունէութիւնդ փոխարինիր շաբաթով, որ հանգստեան և աղօթքի օր է. ազատուիր քո նուաճած նիւթիցդ, որպէս զի սա քեզ չթուլացնէ, չծծէ քո բոլոր հիւթը, որպէս զի դու չմեռնես իսկական կեանքի համար, կտրիր քո մեքենաների ականջ իւլացնող ձայնը, որպէս զի լսելի լինին քեզ բնութեան և մարդոց աղօթքն ու մաղթանքն Աստծուն, որպէս զի ամենքի ձայները միանան ի մի ներդաշնակութիւն, որպէս զի աղքատները, մշակները և երեխայք — աղքատ երեխայք ևս, որոնց մէջքը կոտորուել է վաղա՛հաս աշխատանքից մեքենաների մէջ, ուր նոքա կենդանի անուի դեր են կատարում — ունենան հանգստեան օր, որպէս զի նոքա չմոռանան — զարհուրելի է ասելը — կանաչատերև անտառներն ու ծաղիկները, թռչնոց և նոցա Հօր՝ ամենաբարձրեալի հայեացքը, որ տեսնում է նրանց և օրհնում երկրն քից։

Այսպէս, Աւետարանը համապատասխանում է մեր բնութեան ամեն կարիքներին։ Եթէ նա պահանջում է հանգիստ, որ կարևոր է բարձր կեանքի համար, այդ չէ նշանակում, որ նա դատապարտում է աշխատանքն, այլ ընդհակառակն նա տալիս է նրան իւր բոլոր նշանակութիւնն ու կշիւր։ Մենք չպէտք է մոռանանք, որ այն ֆիզիքական աշխատանքն, որ այնքան արհամարհելի էր Յոյներին և Հռովմայեցիներին, որոնք նրան ստրուկների բաժին էին թողել, Քրիստոսի ժամանակից յարգուում է օրէնքներից և կատարուում է ազատ մարդոց ձեռքերով։ Այժմ ժողովրդեան յայտնի շողոքորթները ձգտում են մինչև անդամ աշխատանք համարելու միայն ֆիզիքական աշխատանքը — կոպիտ և կեղծ շողոքորթութիւն, որ ձրգտում է բոլոր մնացած հասարակութիւնք պորտաբոյծներ երևեցնելու։ Կարծես մտաւոր աշխատանքը հաւասար չէ ֆիզիքական աշ-



խատանքին, կարծես թէ կարկինով աշխատող ճարտարապետը պակաս նշանակութիւն ունի, քան բաճով մշակող քարտաշը, կարծես մակարդակ նկարելու համար կուացած ճարտարապետը պակաս է յոգնում քան հնոց վառողը կամ մեքենագործը, կարծես թէ հաշիւներն ու խորին խորհրդածութիւնք, որոնք նախապատրաստութիւնք են մի մեծ ձեռնարկութեան համար, աւելի պակաս ջանք ու հոգեկան լարումն են պահանջում, քան մշակի տասներկու ժամուան աշխատանքը արհեստանոցում:

Ահա՛, աշխատանքի պարտաւորական լինելու մեծ օրէնքն է հաստատում Աւետարանը երկու ծառաների օրինակով, որոնք կրկնապատկեցին իրանց ստացած քանքարները, Աստուծոյ տուած սկզբնական շնորհները բազմապատկեցան նոցա աշխատասէր և ճարտար ձեռքերում: Մենք, եղբարք, այստեղ քննութեան կառնենք այն, ինչ որ կարող է բացառապէս մարդկային առաւելութիւն կոչուիլ: Անշուշտ դուք գիտէք, որ մեր ժամանակում կայ յայտնի դպրոց, որ ձգտում է ոչնչութեան հասցնել այն տարբերութիւնն, որ կայ մարդու և անբան կենդանու մէջ, երբեմն առաջինին ստորացնելով և երբեմն մեծացնելով վերջինի ընդունակութիւնքը: Հեշտ է գուշակել այն չարամիտ բաւականութիւնն, որ ստացուում է այս տեսակ խորհրդածութիւններով քրիստոնէական կրօնի դէմ, արմատախիլ անելու նպատակով այն, ինչ որ նոքա կոչում են մարդկութեան սնապարծութիւն (այսինքն անմահութեան յոյսը) և ապացուցանելու նրան, որ գոված բոլոր բարոյական ազատութիւնն իսկապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ դատարկ ցնորք: Պատճառաբանութիւնը նոր չէ՝ մենք գիտենք Որոգինէսի գրուածքներից, որ այդ հիմունքն, իբրև զէնք քրիստոնէութեան դէմ, դեռ ևս երկրորդ դարում գործ էր դնում Յելլիոսը: Եւ ահա այն դպրոցն, որոյ մասին խօսքս է, ճրգնում է ժողովելու բոլոր ապացոյցներն, որոնցից իբրև թէ պարզապէս երևում է, որ կենդանու խելքը տարբերուում է մարդուս խելքից քանակութեամբ միայն և ոչ որակութեամբ: Այսպէս այդ կարծեքին հետևողները մոռանում են, որ մինչև ցայժմ կենդանական աշխարհում նկատուած չէ ոչ գիտակցութեան և ոչ էլ յառաջագիմութեան կարիք: Այն կենդանիք, որոնց վերայ յօժարու-



Թեամբ մատնացոյց են լինում — մեզու, ջրշուն, մրջին, կապիկ — երբէք ոչ մի բանում փոխած չեն իրանց սովորութիւնքն, և չեն ստեղծագործած մի բան, որ ապացոյց լինէր նոցա կատարելագործուելու ընդունակութեան: Միայն մարդս է Աստուծոյ շնորհները մեծացնում և բազմապատկում, նա միայն երկու քանքարը չորս է դարձնում և հինգը տասը, նա միայն է յառաջադիմում, նա միայն է ընդարձակում իւր գործունէութիւնն ի լայնութեան և ի հեռաւորութեան, ի խորութեան և ի բարձրութեան, միայն նրան ոչինչ բան սահման զնել չէ կարողանում, որովհետև նա ստեղծուած է կատարելագործուելու համար, որովհետև նորա կոչումն է, ըստ Աւետարանի, վսեմ և յաւիտենական: Այ, Աւետարանը չէ սահմանափակում, չէ նեղացնում մարդկային կեանքի և գործունէութեան ասպարէզը: Ինձ լսող երիտասարդներ, մի խռովիք ողորմելի սոփեստաբանութիւններից. Աւետարանը կեանք է և զօրութիւն, նա — կենսատու է և արդիւնարար: Ընդհակառակն այն նիւթապաշտական վարդապետութիւնք, որոնք ներկայումս նրան ախոյեան են դուրս գալիս, փակում են մեզ օրհասական, աւելի և աւելի նեղացող շրջանակի մէջ: Քրիստոնէական կրօնը — սա խմոր է, որ խմորում է, — նա անսահման ընդլայնումն է մարդկային հոգւոյ — ըմբռնումն է ճշմարտութեան զեղուն լրութեամբ — սիրտն է, որ պահանջում է նոյն խորին սէրն, որպէս խորին են նորա ցանկութիւնքը — նա խղճմտանքն է, որ ցանկանում է սրբութիւն. — նա մարդն է որ յառաջադիմում է ամեն ուղղութեամբ և որ հետեւում է վսեմ գաղափարին, ոչ իբրև փիլիսոփայ, որ տեսնում է սորա մէջ միայն խաբուսիկ կրկներևոյթ, որ ոչինչ իրական չէ բովանդակում իւր մէջ, այլ իբրև մի արարած որ պատասխանում է նորա կոչին, որ ասաց. որոնեցէք և կգտնէք, խնդրեցէք և կտրուի ձեզ . . դա մարդն է, որ որոնում է, խնդրում է, աշխատում է և ի վերջոյ տեսնում է, որ օրհնութիւնն ի բարձանց իջել է նորա արդիւնաւոր աշխատանքի վերայ և որ նորա կեանքը աւելի և աւելի ընդարձակուում է և աւելի առատանում սիրոյ և արդարութեան Աստուծոյ գոգում:

Այժմ ցոյց տալից յետ աշխատանքի մեծ պարտականութիւնն,



որ դնում է Աւետարանն ամենքի վերայ, մերձենանք մեր բնաբանի բուն բովանդակութեան: Ի՞նչպիսի վաստակից կամ աշխատանքից օգուտ քաղեցին Հաւատարիմ ծառաներն, որոնք իրանց տուած քանքարները շահեցրին: Պէտք է արդեօք Հասկանալ այս դէպքում պարզապէս կենսական գործունէութեան Համար գործադրութիւնը բնական ընդունակութեանց, ֆիզիքական ուժի, խելքի, և նիւթական միջոցների, որոնցմով մարդս Հանդէս է դուրս գալիս կենսական ասպարիզում: Արդեօք Յիսուս Քրիստոս կամենում էր միայն, ինչպէս կարծում է անմիտ բանապաշտութիւնը Հաստատել, տալ պարզ խրատ կանոնաւորութեան, խնայողութեան և բարի Համաձայնութեան կեանքի մէջ, ինչպէս այդ անելու կարող էր մտածել մի եբրայեցի ըբբունի, որ երեւակայելիս լինէր թէ նորա Հայրենակիցները այս վերաբերութեամբ բաւական զարգացած չեն և թէ նրանց Հարկաւոր է խնայողութեան և կեանքի մէջ կարևոր գործնականութեան մի քանի դասեր էլ առնելու:

Յայտնի բան է այսպիսի բացատրութիւնը միայն ժպիտ կարող է յարուցանել և նախնի եկեղեցին չէր ընդունում նրան: Քանքար ասելով, որոյ մասին է խօսքը, նա՛ եկեղեցին աւելի Հասկանում էր պարզ Հոգևոր շնորհքն, որ եկեղեցւոյ գլուխ Յիսուս Քրիստոսն բաժանում է նորա անդամներին անհաւասար չափով: Այսպէս գործրինակ Պօղոս առաքեալը ստացաւ նրանից Համարձակ և սուր միտք, նոյնպէս գործունեայ մարտիկի յաղթահարող զօրութիւնը, Պետրոս առաքեալը — սրտի ազնիւ զգացմունքներն և վճռական սկզբնաւորողի յատկութիւնքը, Յովհաննէս առաքեալը — շնորհ վսեմ և խորին խորհրդածութեան և մտածութեան: Այսպիսի բացատրութեան Հիման վերայ շատերն եկեղեցւոյ սուրբ Հայրերից կարծում էին, որ անհաւատարիմ ծառան — Յուդա Իսկարիովտացին է, որ նախանձում էր իւր առաքելակիցների աչքի ընկնող առաւելութեանց և թաղեց իւր քանքարը իւր զայրացած և խռովեալ սրտի անբերրի և ցամաք Հողի մէջ: Յայտնի բան է այս վերջին բացատրութիւնը շատ և շատ բարձր է առաջինից, բայց նա էլ բաւարարիչ չէ, որովհետև առական աւելի ընդարձակ միտք ունի: Քանքարները նշանակում են Աստուծմէ բղիած բոլոր պարզները,



Թէ մարմնաւոր և թէ հոգւոր պարզւեաները, յաւիտենական շնորհքն ու ժամանակաւոր բարիքը: Այս բոլորը կարելի է սրբագործել ծառայեցնելով Աստուծոյ, այս ամենը կարող է շահիլ քրիստոնէի ձեռքում: Ինքնըստինքեան հասկանալի է, որ ծառաների գործունէութիւնը պիտի լինի բարեպաշտական բնութեան և որ Յիսուս Քրիստոս բնաւ չէ մտածել ուսուցանելու իւր աշակերտներին, թէ ինչպէս կարելի է աշխատանքով ու իննայողութեամբ հարստութիւն դիզել. բայց և այն պարզ է, որ նա չէ կամեցել մերժել ոչ մի հոգեկան յատկութիւն, բնութեան ոչ մի պարզւեան և ոչ մէկն այն շրջաններէց, որոնց մէջ անցնում է մարդուս երկրաւոր կեանքը:

Ես մանաւանդ պնդում եմ այս հանգամանքի վերայ և ահա՛ ինչու: Հին ժամանակի հեթանոսութիւնը տոգորուած էր բոլորովին մի գաղափարով, որ ոչ հրէաներին էր յայտնի և ոչ էլ առաջին դարերի քրիստոնէից, բայց որ յետոյ ստացաւ քաղաքացիութիւն և եկեղեցական գործնականութեան մէջ, այդ է աշխարհիկի և սրբազանի մէջ եղող տարբերութեան գաղափարը: Աշխարհիկ է այն ամենն, ինչ վերաբերում է մարդոց և ներկայ կեանքին, սուրբ է այն, ինչ վերաբերում է Աստուծոն: Օճախը, մշակի գործիքները, գիտնականի հետազոտութիւնք, առհասարակ բոլոր քաղաքական կեանքը — աշխարհիկ են. իսկ տաճար, սեղան, կրօնական հանդէսք և տօնախմբութիւնք — սրբազան են: Ես ասացի, որ եբրայական կրօնն այս տարբերութիւնը չէր ճանաչում, թէ և հրէայք ունէին քահանաներ, տաճար և կրօնական հանդիսաւոր ծէսեր, բայց Աստուածաշունչ Գիրքը միշտ խնամքով յիշեցնում է, որ բոլոր Իսրայէլն իւր Աստուծոյ քահանայն է, որ բոլոր կեանքը պէտք է ծառայութիւն լինի Աստուծոյ և իւրաքանչիւր տուն — սրբութիւն: Մովսէսի գրքերի մանրամասն պատուէրներն, որոնք վերաբերում են Իսրայէլի որդոց բոլոր թէ հասարակական և թէ մասնաւոր կեանքին, Իսրայէլի որդոց, որոնք իրանց դռների սեամի և իրանց շորերի վերայ օրինաց խօսքերը դրոշմում էին — այս ամենը վերջապէս ոչ այլ ինչ են ցուցանում բայց թէ այն գաղափարը թէ Աստուած Տէր է, որին ամեն ինչ վերաբերում է, Որ հոգում ամբողջ կեանքի վերայ, սկսած օրօրոցից մինչև գերեզման և Որին պէտք է պատկանի առաջին տեղն ամենուրեք:



Աւետարանի մէջ աւելի պակաս նկատելի է իրերի այն հին երկու բաժանումն՝ աշխարհիկ և սրբազան: Եւ յիբաւի Յիսուսի Քրիստոսի աչքում կայ արդեօք աշխարհիկ ինչ: Նորա ժամանակի ճրգնաւորներն ամուսնութիւնը աշխարհիկ էին համարում, Յիսուս իւր հասարակական գործունէութիւնը Քալիլիայի Կանա քաղաքի հարսանիքի հրաշքով սկսաւ: Այլ իմաստունք անիծում էին բնութիւնն, իսկ Յիսուսի համար նա եղաւ նորա հրաշալի առակների նիւթ և զարդ: Ռաբունիք ուսուցանում էին տաճարում, Յիսուս խօսում էր նաւակի վերայ նստած կամ Յակովբի ջրհորի մօտ և կամ (ն՛հ գայթազուութիւն) մաքսաւորի սեղանի մօտ նստած: Երբ փարիսեցիք ասացին Յիսուս Քրիստոսին՝ զաղարիւր հրաշքներ գործել և քարոզել, որովհետեւ շաբաթ է, երբ այդ երեսպաշտները եօթներորդօրուայ սրբութեան պատրուակով կամենում էին փակել Արդարի և Սրբի շրթունքը — նա պատասխանեց նրանց այս պարզ և վսեմ խօսքերը, «Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ» (Յով. և. 17): Յիսուսի Քրիստոսի համար ամեն ինչ կարող է և պէտք է լինի սուրբ և Պօղոս առաքեալ, ճշտութեամբ և ուղղութեամբ ըմբռնելով իւր Աւսուցչի միտքն, ասում է այս համարձակ խօսքերը. «Արդ եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք, եթէ զինչ և առնիցէք, զամենայն ինչ ի փառս Աստուծոյ արասջիք» (Առ Կորնթ. Ժ. 31):

Կեանք, որ ամբողջապէս տոգորուած է մի գաղափարով և ուղղում է բոլոր գործողութիւնք առ Աստուած — ահա այն բարոյական գաղափարն, առ որ մինք պէտք է ձգտենք: Բայց որքան հեռու ենք մենք սրանից: Հին հեթանոսական տարբերութիւնը աշխարհիկի և սրբազանի մէջ մուտ է գործել և քրիստոնեայ հասարակութեան մէջ և գրեթէ առանց դիմադրութիւն տեսնելու իշխում է նորա վերայ: Մեզանից մեծ մասը վարում է երկու տեսակ կեանք, որոց մէկը միւսի մէջ չէ թափանցում, մէկը պատկանում է Աստուծոյ, միւսը աշխարհին և այս բաժանումն յաճախ հասնում է դառն հակասութեան:

Ահա, զորօրինակ, մի մարդ, որ իւր անունն ու անվանութիւնը գործ է դնում վատ և դատապարտելի ձեւերակութեանց յաջողութեան համար, մարդ, որոյ ստուարացող հարստութիւնը կազմ-



ուել է անարդար ճանապարհներով: Ես բնաւ չեմ գարմանալ, եթէ նա կիրակի օրը նոր խիղճ կառնու և ամենքին կգարմացնէ իւր բարեպաշտութեամբ: Մօտիկ ժամանակներս անգլիական պատգամաւորաց ժողովում մեծ աղմուկ հանեց համարձակ մերկացումն բազմաթիւ չարագործութեանց, որոնք անվրդով կերպով և դիտմամբ գործուել էին: Վաճառականները շատ թանգ գնով ապահովել էին տուել իրանց հին, կիսափուտ, փոթորկին դիմանալու անկարող նաւերն և իսկոյն ուղարկել նրանց հեռաւոր ճանապարհ գաղտնապէս յուսալով, որ նոքա անշուշտ կխորտակուէին, զոհ տանելով իրանց ապաստանած ճանապարհորդներին էլ: Եւ միայն այն ժամանակ երբ այս վատթար տմարդի իրողութիւնք, որ աւելի դատապարտելի են քան կախաղան տանող մարդասպանութիւնը, երբ այս իրողութիւնք, որոնք կատարուում էին սատանայական ճշտութեամբ հաշուած դիտաւորութեամբ, սկսան գործադրուիլ յաճախակի և աշկարացան, անգլիական հասարակական կարծիքը վերջապէս ազդակ բարձրացրեց և բողոքեց նոցա դէմ: Եւ ահա ես բոլորովին լրջութեամբ առանց կատակի կասեմ՝ որ ինձ բնաւ չէր գարմացնիլ, եթէ այդ շիտակ մարդասպանները, ստանալով իրանց ապահովացրած նաւերից մէկի խորտակման լուրը, սովորութիւն արած լինէին առատ նուէրներ տալու յօգուտ որ և է կրօնական կամ բարեգործական ձեռնարկութեան: Ես կարծում եմ, որ այս բոլորովին հաւանական է, ես գրեթէ համոզուած եմ այս մասին, որովհետեւ այդպէս նրանց կյաջողէր լռեցնելու իրանց խղճմտանքը: Ես նոյնպէս համոզուած եմ, որ եթէ աշխարհումս լինէր այնպիսի յարմար մի կրօն, որ ուսուցանէր, թէ յայտնի բարեպաշտական նուէրներով կարելի է քաւել մեղքերն, այդ մարդիկ անշուշտ կդառնային նորահետևողները, որովհետեւ այդ կրօնը հէնց նոցա նմանների համար ձեւած ու կազմուած կլինէր: Ոհ, այս մասին աչքի ընկնող օրինակներ ընտրելու համար ինձ մինչև անգամ հարկ չկայ մեր պետութեան սահմանից անցնելու: Որքան կան մեր մէջ ամենուրեք բարձրագոյ բարեպաշտական գործեր, ուխտագնացութիւնք սուրբ տեղերն և արտաքին սխրագործութիւնք, որոց իսկական առիթն է յանցաւոր խղճի անհանգստութիւնը, որից ինչպէս և իցէ ազատուե-



լու կարիքը զգացուում է:

Ինչպէս նկատեցի, այսպիսի անձանց կեանքն երկու մասն է բաժանուում, որոց մինը նուիրուած է Աստուծոյ, միւսն աշխարհի մէկում տիրում են բարեպաշտական զգացմունքներ, միւսում մեղքին հպատակ սրտի անմիտ ցնորքները. մի կողմից վսեմ ձգտումներ են, միւս կողմից գաղտնի ապականութիւն և ամօթալի անկումն:

Երբեմն հակասութիւնն այնպէս մեծանում է և շարաշար դառնում, որ առաջ է գալիս ներքին երկպառակութիւն և սարսափած խղճմտանքն իւր իրաւունքները ձեռք է առնում: Հէնց այս ժամանակ դուք կտեսնէք կոյր նախանձայուզութեան եռանդի պայթիւնը: Այն կիսն, որ երեկ սաւառնում էր աշխարհի փոթորկի մէջ, այսօր կուրորէն անձնատուր է բարեպաշտութեան, յափշտակուում է անսովոր պահքով ու ծովով ու հարկ եղած տեղը նրանց հնարում էլ է: Պարզ, լուրջ հաւատն իւր կանոնաւոր միակերպ պարտականութիւններով և համեստ գործունէութեամբ — այս բնաւ նրան հարկաւոր չէ. նրան հարկաւոր են անսովոր յուզմունք ու գրգռութիւնք, նոր ուխտադրութիւնք և համարձակ հրաւեր մեղաւոր աշխարհին ի պատերազմ: Բարեպաշտութեան ծայրահեղութեան մէջ ընկղմում են այնպէս հեշտութեամբ, ինչպէս և նորաձեւութեան ծայրահեղութեան մէջ: . . . Ո՛հ, համոզուած եղէ՛ք, որ դրանով աշխարհային ունայնութիւնն ոչ մի կորուստ չէ ունենում: Յայտնի բան է, այս ամենը ծաղրալի կլինէր, եթէ գործը քրիստոնէական հաւատին չվերաբերուէր, եթէ սա հրապարակաւ շանպատուուէր ու կատակի առարկայ չդառնար այն անմիտ չափազանցութիւններով, որոց դէմ միշտ չեն յանդգնում մարտնչելու նոքա, որոց պարտքն է զեկավարել այն հոգիներին, և որոնք երբեմն մինչև անգամ օգուտ են քաղում նոցա անմտութիւնից իրանց նպատակին հասնելու և իրանց գործի յաղթանակութեան համար:

Այսպիսի դէպքում Աստուծոյ համար ի՞նչ է կատարուած: Ամենից առաջ և ամենից աւելի Նա ի՞նչ է պահանջում: Ինքն իրան նրան ընծայելը. բայց այս տեսնում ենք արդեօք այնտեղ: Ո՛չ. ընդհակառակն. որպէս զի Աստուծուն իրանց սիրտը չնուիրեն, տալիս են նրան ողորմութիւն, զոհ, պահք — մի խօսքով ամեն ինչ



բացի նրանից, ինչ որ նա ամենից առաջ պահանջում է:

Այսպէս, կարելի է արդեօք այսպիսի անձանց կեանքը համեմատել քանքարների առակի հաւատարիմ ծառաների կեանքի հետ: Նոցա գործերը նման են արդեօք աճող քանքարներին: Ո՛հ, յայտնի բան է այս գործերը կարելի է հաշուի առնել և գովաբանել, նրանց կարելի է յիշել դամբանական ճառի մէջ զգածուած բազմութեան առաջ, վերջապէս նոքա կարող են յիրաւի օգտուէտ լինել և արգիւնաւոր այն թշուառների համար, որոնց նոքա հազցրել են և կերակրել: Բայց արդեօք այդ գործերն օգուտ բերել են նրանց գործողներին, այն ունայնասէր մեղաւոր հոգիներին, որոնք իրանց յոյսը նոցա վերայ դրել էին, կարծում էին նրանցմով իրանց մեղքերը քաւելու և երկնից արքայութիւնը ժառանգելու: Եթէ Աստուծոյ ողորմութիւնը գնուում է, եթէ Աստուծոյ թողութիւնն ու ներումն վաճառք է, եթէ երկնից դռները, ինչպէս մի թատրոնի դռներ, բայց են ամենքի համար, ոյք կարող են վճարել մուտքի վճարը, այն ժամանակ, այո՛, բայց եթէ երկինքը սիրող սրտի, Աստծուն որոնող սրտի և իւր երջանկութիւնը նորա հետ ունեցած յաւիտենական հաղորդութեան մէջ գտնող սրտի վիճակ է, այն ժամանակ, յայտնի բան է, ո՛չ: Կայ կեանք, որ ըստ արտաքին երևութի առատ է և արգիւնաւոր, բայց իսկապէս աղքատ է և ողորմելի, որովհետև նա չունի այնպիսի յենման կէտ, առանց որոյ անհասկանալի է քրիստոնէական կեանքը, նա իրան չէ նուիրած Աստծուն: Ինչո՞ւմն է գործողութեան արժէքը: Այն զգացման մէջ, որոյ ազդմամբ նա կատարուում է: Ի՞նչն է գործողութիւնը Աստծուն հաճելի անում, — սէրն, որով նա կատարուում է: Ուր սէրը չկայ, ի՞նչ կշիռ ունի արտաքին գործողութիւնն յաչս Նորա, որին անհնար է խաբել: Բազմապատկեցէ՛ք զրօն թէկուզ հարիւր հազարների վերայ, էլի ոչ մի հետեանք չէք ստանալ, էլի գումարը ոչինչ կլինի:

Թո՛ղ սէրից զուրկ սիրտը բարդէ իւր փրկութեան համար մի բարեգործութիւն միւսի վերայ, էլի նա ոչքնչի չի հասնիլ: Եթէ նաւարեկութեան ժամանակ ես գտանուում եմ խորտակուող նաւի վերայ և ինձ մօտեցնում են ազատող նաւակը, ես, յայտնի բան է,



նորա մէջ կգցեմ բոլոր այն թանգագին բաներս, որ կամենում եմ ազատել, բայց ի՞նչ կմտածէք դուք, եթէ ես ինքս հրաժարուեմ թռչելու այդ նաւակի մէջ: Նոյնը չէ պատահում արդեօք և ձեզ, որոնց Աստուած կամենում է ազատել այս աշխարհից և մեղքի լափոյլ անդունդից: Դուք զգում էք, որ գետինը ձեր ոտների տակ տատանուում է, դուք հասկանում էք, որ եթէ ոչ այսօր վաղը մահը վրայ կհասնի, ուստի և Աստուծուն զգում էք, տալիս էք ձեր աղօթքները, ապաշխարութիւնը, խոստումները, զոհերը և հարստութիւնքը, իսկ դուք իրանքդ: Դուք իրանքդ ամուր կպած կուռքին՝ այս կամ այն կրքին անձնատուր, սպասում էք վերջին ալիքին, մահուան ալիքին, որ ձեզ բաժանելով Աստուծոմէ՝ կտանէ յաւիտենական անդունդը:

Աւրեմն, ես ասում եմ, ամենից էականն, ամենից կարևորը միայն բարի գործեր կատարելը չէ, որոնք կարելի է հաշուի առնել և ցուցակագրել, այլ այն, որ մարդս իւր սիրտը նուիրել է Աստուծուն, որ ամեն ուրեք նրան ծառայէ, ուր և բազմը նրան զցած ինչեր և որպիսի ասպարէզումն էլ գործելիս լինէր: Եղբարք, հարկաւոր է, որ մեր բոլոր էութիւնը ու գոյութիւնը քրիստոնէական ոգւով ներշնչուած լինի, որ այն, ինչ որ կոչում են աշխարհիկ գործունէութիւն և կրօնական գործունէութիւն, ոչ միայն միմեանց չհակասեն, այլ և զուգընթացաբար ընթանան և մի գործունէութիւնը թափանցէ միւսի մէջ: Մեծ մարդոց բնաւորութեանց գաղտնիքը այդ գործունէութեանց ամբողջութեան մէջ է: Եղբարք, հարկաւոր է, որ դուք ամեն ուրեք, ուր և հանդիպեմ ձեզ՝ գործի մէջ թէ աշխատանաց մէջ և կամ ընտանիքում, լինիք նոյն մարդիկն, որպիսի էք այստեղ տաճարում, ուր ես ձեզ հետ խօսում եմ: Հարկաւոր չեն երկու խղճմտանք, երկու սիրտ, հարկաւոր է մի կեանք, որ գէպի մի նպատակ է ձգտում: Այս պայմանով միայն ձեր գործունէութիւնն արդիւնաւոր կլինի և ձեր քանքարները կշահուին, կբազմապատկուին: Այն ժամանակ փոխանակ ինքդ քեզ հարց տալու՝ թէ ի՞նչ բարեբաղդ գործ կատարես կամ ի՞նչպիսի մի անսովոր գործ գործես, դու, եղբայր իմ, քրիստոնէաբար կրկատարես այն գործն, առ որ կոչուած ես, որ-



պիսի վիճակի մէջ էլ լինիս, հարուստ լինիս թէ աղքատ, մեծ թէ փոքր, լինիս դու պատգամաւոր, պաշտօնեայ, սեղանաւոր, վաճառական, մշակ թէ ծառայ:

Ես գիտեմ, որ դժբաղդարար ոչ ամէն տեսակի պարապմունքներ թոյլ են տալիս Աստուծոն յիակերպ փառաբանել և ծառայել Նրան: Կան այնպիսի զբաղմունքներ, որ դրականապէս մեղադրելի են և պատժապարտ, որոց մէջ ստութիւնն ու խաբէութիւնը — կանոն են և ապականութիւնը նպատակ, և որոնցից պէտքէ ազատուել, պատիւ և հոգի փրկելու համար: Ի վերջոյ կան այնպիսի պարտաւորութիւնք, որոնք ինքն ըստ ինքեան ոչ մի յարաբերութիւն չունեն Աստուծոյ ծառայութեան հետ. և ահա սրանց էլ պէտք է կատարել քրիստոնէական սիրոյ ոգւով, հեռու մնալով նոցա զօսացուցիչ ազդեցութիւնից, բոլոր ազատ ժամանակն ու միջոցները նուիրելով աւելի վսեմ նպատակների, զուտ քրիստոնէական գործերի: Բայց, կրկնում եմ, ամենից առաջ մեր ոյժերը պէտք է ուղղած լինեն դէպի այն, որ կատարենք քրիստոնէական հոգւով գործն, որի համար կոչուած ենք: Երբեմն կարող է պատահել, որ աշխարհիկ երեւցած գործը աւելի ուղղապէս և պարզապէս ծառայէ Աստուծոյ, քան մի պարզ կրօնական — բարեպաշտական գործ:

Ինչուք զորօրինակ մի հաւատացող և սիրող սրտով մարդ, հարուստ միջոցների տէր էլ գոլով, գտանուում է մեր երկրի որևէ յետ ընկած անկիւնում, ուր բնակիչք անկիրթ են և կոպիտ, որովհետև աղքատութեամբ և տգիտութեամբ ստորացած են: Ի՞նչ միջոցով կարող է նա նրանց բարձրացնել: Մեծ հարստութիւն ունենալով, նա կարող էր նոցա համար հոյակապ տաճար կանգնել, բայց այս մարդը տաճար չէ կանգնում: Ինչ որ կանէին անշուշտ միջին դարերում, երբ բարեպաշտութեան գաղափարը կայանում էր ճրգնաւորութեան մէջ և մարմնոյ տանջանքն ու ճնշումն համարուում էր պատրաստութիւն երկնաւոր կեանքի համար: Այս մարդն այդ չէ անում: Կրօնական անտարբերութեան պատճառով արդեօք: Ոչ բնաւ, այլ նա գիտէ, որ ճարտարապետական այդ հոյակապ շինուածք նրանց չի ազատիլ փորձութիւններից, որոնք առաջանում են տգիտութիւնից: Նա կարող էր կանգել և աղքատանոց կամ ա-



պատանարան, ուր ամեն կարօտեալներ, հանգիստ կգտնէին. բայց նա այդ էլ չէ անում: Խստասրտութիւնից արդեօք դրդած: Ոչ, այլ նա գիտէ, որ չարիքը բուժելից աւելի նշանաւոր է և օգտաւէտ նորա առաջն առնելը, նա գիտէ, որ եթէ լաւ է վարարող հեղեղի առաջը փակելն առ ժամանակ, աւելի լաւ է բոլորովին նորա վարարելուն և աւերիչ հեղեղման առաջն առնելը: Եւ ահա լրջութեամբ և հասունութեամբ ամեն ինչ կշռելից յետ այս մարդը իւր հարստութիւնը գործ է դնում նորա վերայ, որ փոխէ անբերրի հողը, անապատը պտղաբեր դարձնէ, որպէս զի կարողանայ այս կիսավայրենի բնակիչներին գրաւել լաւ վարձատրող և ազնուացնող պարագմունքի համար, որ աղքատութեան ակտի ջնջողն է: Նա կը կանգնէ այնտեղ որևէ գործարան, որ կկառավարէ իբրև քրիստոնեայ, այսինքն կնայէ մշակների վերայ իբրև մարդոց վերայ, իբրև իւր օգնականների վերայ և ոչ իբրև կենդանի գործիքների վերայ. և այնտեղ, ուր վաղ վտիտ, հիւանդոտ, ցնցոտիքով ծածկուած բնակիչները միմեանցից խլում էին անբերրի երկրի աղքատիկ բերքը, կլսուի եռանդուն գործունէութեան ուրախ ձայնը: Փոխանակ նեղ ու վատառողջ խրճթի, ուր մանուկները քնում էին հորթերի հետ, կկանգնուի քարաշէն տուն. սրանից յետ կերևի եւ եկեղեցին եւ դպրոցը և այսպէս զուտ աշխարհիկ ձեռնարկութիւնը կապացուցանէ աշխարհին, որ ըստ բանից Ա. Պօղոս առաքեալի «Աստուած պաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է և զաւետիս կենաց ունի զարդիս և զհանդերձելոյն» (Առ. Տիմոթ. դ. 8):

Եթէ այսպիսի է աշխատանքի էութիւնն, որ Աստուած պահանջում է, որ մարդը կյանդգնի ասելու, որ Աստուծոյ ծառայելու համար չէ կարող նորա տուած պարգևները շահել՝ բազմացնել: Երկնից արքայութիւնից ոչինչ մերժած չէ բացի մեղքից: Նուիրեցէք ուրեմն, եղբարք, ի ծառայութիւն այսպիսի բարի տիրոջ՝ ձեր բոլոր ընդունակութիւնքն ու ոյժերը, մանաւանդ դուք, երիտասարդք և ազջկունք, դուք, որ դեռ մեծ յոյսերի և ընդարձակ դիտաւորութեանց հասակումն էք, դուք որ դեռ կենսական ասպարիզի ճանապարհի սկզբումն էք կանգնած, մինչդեռ մենք արդէն նորա կէսն անցած ենք:



Կամենո՞ւմ էք արդեօք դուք լինել անշահ պատառաբոյժներ, որոնք ոչինչ չեն աւելացրել հաւատոյ, անձնուիրութեան և ազնւութեան այն գումարի վերայ, որ մարդու իսկական հարստութիւնն է: Կամենո՞ւմ էք դուք դասիլ ի շարս գուարճասէր մարդոց, որոնք ա՛մին այլ գործի վերաբերութեամբ զգուելի ծուլութեան մէջ են ընկրդմած: Ֆլորէնդացի մեծ բանաստեղծ Ռանտէն հանդիպեցաւ այս վերջինների հոգւոց դժոխքի նախադրան մօտ և ահա նորա ուղեցոյցն այդ մարդոց վիճակի համար ինչ է ասում: «Թշուառ է այս ողորմելի հոգիների վիճակն, որոնք ապրել են առանց վատանունութեան և փառաց. նոքա խառնած են անարդ գնդի մէջ այն հրեշտակների, որոնք ոչ ապստամբ էին և ոչ էլ հնազանդ Աստուծոյ, այլ ապրում էին իրանց համար: Երկինքն աքսորում է նրանց, որպէսզի նորա գեղեցկութիւնը չայլայլեն և դժոխքը նրանց չէ կամենում ընդունել: Աշխարհը բնաւ նոցա յիշատակը չէ պահպանած: Արդարութիւն ու գթութիւնն արհամարհում են նրանց: Զխօսենք նոցա մասին, տե՛ս և անցի՛ր» . . . . :

Կամենո՞ւմ էք արդեօք ապատուել այս ամօթից, անարգութիւնից և ոչնչութիւնից, բացէք ձեր սրտերը, բացէք նրանց բոլորովին Աւետարանի ոգւոյ համար. եւ դուք, որ լալիս էք ցայժմ վարած ապարդիւն և կորած կեանքի վերայ, — կվերածնի՞ք նոր յուսոյ համար:

Այստեղ ես յիշեցի մեռնող գեներալ Ռեգէի խօսքերն, որոնք նա ուղղեց նապոլէոն Բոնապարտէին և որոնք Մարենգոյի պատերազմի վիճակը որոշեցին: Զօրավար, ասաց նա, այս պատերազմը կորցրած է, բայց մենք ունինք ժամանակ մի այլ պատերազմում յաղթութիւն վաստակելու: Դուք, որ կենսական պատերազմում ընկճած էք, դուք, սկեպտիկեան (երկբայող) և յափրացած իմաստունք, որ ընկճած էք սրտի յուսահատութեամբ — աշխատեցէ՛ք, վաստակեցէ՛ք:

Քանի որ արեգակը փայլում է ձեր հորիզոնի վերայ, քանի որ Աւետարանն, հոգւոյ այդ արեգակը, լուսաւորում է ձեզ, քանի որ ձեր մէջ կայ կեանքի նշոյլ — կարելի է յուսալ և կեանքը նորից սկսել, ապաւինելով Նրան, որ վերանորոգում է և վերածնում,



որ անապատը ծաղկալից պարտէզ է դարձնում և ժայռից ջուր բղխեցնում: Ապագրոս անշարժ էր և սառած, նորա մարմինն արդէն լուծուում էր, երբ Քրիստոս ասաց նորան, վեր կաց և դուրս եկ գերեզմանից: Ինչ որ պատահեցաւ այն ժամանակ, պիտի կրրկնուի և ապագայ դարերում: «Ես եմ յարութիւն և կեանք» ասաց Տէրը: Արդեօք այս խօսքերը չէ՞ն վերաբերում այն մարդոց, որոնց հոգիք մեռած են: Արդեօք Քրիստոս ամեն ինչ փոխելու և նորոգելու համար չեկա՞ւ: «Բայց եթէ ինչ ի Քրիստոս, ասում է Պօղոս առաքեալը, նոր արարած իցէ. զի հինն անց և արդ նոր եղև ամենայն» (Երկրորդ Կորնթ. Ե. 17):

(ԲՅՐԻՆՆԷ)

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՏՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ՀԵՍԵՐԵԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ.

(ՀԻՆ-ՆԱԿԻ-ՆԷՆ)

Երկու մատաղահաս ամուսնացած կանայք, ծերունի Անդիֆոնոսի աղջկունք — Պանդիրիսն և Պինացիան — թողած են իրանց ամուսիններիրից, որոնք իրանց բոլոր հարստութիւնը կորցրած լինելով գնում են օտար հեռաւոր աշխարհներ իրանց գործերը կարգի բերելու համար: Մի քանի տարի շարունակ ամուսիններն իրանց մասին ոչ մի տեղեկութիւն չեն հաղորդում, բայց հաւատարիմ կանայք ամեն առաւօտ ուղարկում են նաւահանգիստ իրանց ստրկին իմանալու թէ արդեօք չեն եկել նոցա ամուսինները: Ի գուր ծերունի Անտիֆոնոսը համոզում է իւր աղջկերանց մոռանալ իրանց մարդոց և նորից ամուսնանալ:

Ձեմ կարող տանել, ասում է Հայրն, որ դուք մինչև ցայժմ չէք բաժանուում այդ աղքատներից: — Հայրիկ, պատասխանում է